

ԱՐԱ ԵՐՆՁԱԿՅԱՆ

ՀՈՒՄՈՐԱԿԱՆ ՀԱՃԱԽՈՐԴ

Հոռետեսական կատակերգություն

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

**ԿԻՆ
ՏՂԱՄԱՐԴ**

Բեմն իրենից ներկայացնում է սենյակ,
որտեղ կան 1-2 բազկաթոռ, սեղան:
Խորքում երկու դուռ կա:
Մեկը տանում է ննջարան, մյուսը՝ խոհանոց:
Առավոտյան ժամը տասն է:
Ննջարանից դուրս է գալիս Կինը՝ Տղամարդու վերնաշապիկով,
նայում է սենյակում թափփված հագուստին և սկսում է հավաքել:
Նույն դռնից հայտնվում է Տղամարդը՝
բաճկոնը մերկ մարմնին հագած:
Կինը, նկատելով Տղամարդու անհեթեթ տեսքը՝ ժպտում է:

ԿԻՆ – Գիտե՞ս, բավական տպավորիչ է, ոնց որ այն անեկդոտից
լինես:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ անեկդոտ:

ԿԻՆ – Դե, որ ամուսինը հանկարծ տուն է վերադառնում և տեսնում է
սիրեկանին՝ ցախավելը ձեռքին... Հիշո՞ւմ ես...
Սպասիր, ցախավելը բերեմ:

ՏՂԱՄԱՐԴ – *(Բավականին լուրջ)* Պետք չի՛:

ԿԻՆ – *(Շարունակում է ժպտալ)* Ոնց կուզես: Իմիջիայլոց, առանց
տաբատի շատ ավելի հուզիչ կլինեիր:
(Դուրս է գալիս խոհանոց: Լսվում է միայն ձայնը):
Ի դեպ, կարող ես հանգիստ մնալ՝ ոչ մի ամուսին այստեղ չի
հայտնվի: Եվ գիտե՞ս ինչու:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ:

ԿԻՆ – *(Հայտնվելով խոհանոցի դռան խորշում)* Այն պարզ
պատճառով, որ չկա... Իսկ եթե նույնիսկ հայտնվեր էլ, մենք
նրան ներս չէինք թողնի:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպե՞ս:

ԿԻՆ – Դուռը կփակեինք ու կասեինք, որ մենք տանը չենք և չենք էլ լինի:

*Այս ընթացքում Կինը հասցնում է վերադառնալ սենյակ՝
սուրճով լցված բաժակները ձեռքին:*

ԿԻՆ – Սուրճը պատրաստ է:
Ես չգիտեի, առավոտյան դու ի՞նչ ես նախընտրում:

ՏՂԱՄԱՐԴ – Փլավ:

ԿԻՆ – Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ուզբեկական փլավ:

ԿԻՆ – Ցավոք, կարող եմ առաջարկել միայն ձվածեղ:

ՏՂԱՄԱՐԴ – Շնորհակալություն, ես պետք է գնամ:

ԿԻՆ – Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես պետք է գնամ:

ԿԻՆ – *(Ձարնացած)* Գնա՞ս...

ՏՂԱՄԱՐԴ – Այո...

ԿԻՆ – Սուրճ է՞լ չես ուզում:

ՏՂԱՄԱՐԴ – Ուրիշ անգամ:

ԿԻՆ – Ես փլավ էլ կարող եմ պատրաստել... բայց պետք է սպասես:

ՏՂԱՄԱՐԴ – Որքա՞ն ժամանակ:

ԿԻՆ – Դե, ճշտեմ բաղադրատոմսը, եռացնեմ բրինձը...

ՏՂԱՄԱՐԴ – Կարիք չկա... Ես իսկապես պետք է գնամ...

ԿԻՆ – *(Շփոթված)* Չեմ հասկանում՝ ինչ-որ բան այնպես չէ՞ր:

ՏՂԱՄԱՐԴ – Դա քեզ հետ չի կապված... Ես պարտավոր եմ գնալ...
Ինձ սպասում են:

ԿԻՆ – Փլավ ուտելո՞ւ...

ՏՂԱՄԱՐԴ – Դրա պես մի բան...

ԿԻՆ – *(Վիրավորված)* Հասկանում եմ... Գիտե՞ս, նման դեպքերում
տղամարդն ինչ-որ բան էլ է ասում կնոջը...

ՏՂԱՄԱՐԴ – Ների՛ր... Դու իրավացի ես... Ինձ շատ հաճելի էր... Դու...

ԿԻՆ – Ի՞նչ ես:

ՏՂԱՄԱՐԴ – Դու չքնաղ էիր... Շնորհակալությունն...

ԿԻՆ – *(Կտրուկ)* Այ, հիմա, կարծես թե, ամեն ինչ ասվեց: Կարող ես գնալ...

ՏՂԱՄԱՐԴ – Ես ուզում էի քեզ ասել...

ԿԻՆ – Ոչինչ պետք չէ ասել: Գնա...

ՏՂԱՄԱՐԴ – *(Անվստահ)* Մենք դեռ կհանդիպե՞նք:

ԿԻՆ – Իհարկե, հենց փլավ եփեմ, անպայման կիրավորեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես փլավի մասին կատակով ասացի:

ԿԻՆ – Ես նույնպես... Իսկ հիմա իսկապես լավ կլինի, որ գնաս:

ՏՂԱՄԱՐԴ – Դու ինձ վռնդո՞ւմ ես:

ԿԻՆ – Կարելի է և այդպես ասել:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ սո՞ւրճը:

ԿԻՆ – Կարծում եմ, այս դեպքում դա ավելորդ է... կամ ինչպես դու քիչ առաջ ճիշտ նկատեցիր՝ ուրիշ անգամ:
(Նկատելով իր վրայի վերնաշապիկը): Կներես, սխալմամբ օգտվեցի քո վերնաշապիկից: Ես հիմա... *(Գնում է դեպի մնջարան):*

ՏՂԱՄԱՐԴ – Պետք չի:

ԿԻՆ – Ի՞նչ է նշանակում՝ պետք չի: Դու այդ տեսքով փողոցի բոլոր շներին սարսափահար կանես:
(Վերադառնում է խալաթով, շապիկը ձեռքին): Խնդրեմ... Ափսոս, մի քիչ ճմրթվել է... Եթե կուզես, կարող եմ արդուկել:

ՏՂԱՄԱՐԴ – *(Վերցնելով շապիկը)* Ես քեզ վիրավորեցի՞:

ԿԻՆ – *(Հագիվ զսպելով արցունքները)* Աստված իմ, ի՞նչ վիրավորելու մասին է խոսքը: Պարզապես ես այսօր շատ զբաղված եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Բայց քիչ առաջ լրիվ ուրիշ տպավորություն էր:

ԿԻՆ – Քիչ առաջ՝ դա քիչ առաջ էր:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ հիմա՞:

ԿԻՆ – Իսկ հիմա պարզվում է արդեն ժամը երկուսն անց է:

ՏՂԱՄԱՐԴ – Հետո՞ ինչ:

ԿԻՆ – Ո՞նց թե «հետո ինչ»: Եթե ամեն հաճախորդի վրա այդքան ժամանակ վատնեն...

ՏՂԱՄԱՐԴ – Հաճախորդի՞... Ինչպե՞ս թե՛ հաճախորդի:
Իսկ ես կարծում էի...

ԿԻՆ – Որ դու իմ երազանքների ասպե՞տն ես: Արագացրո՛ւ, քեզ ասացի, և աշխատիր շենքից աննկատ դուրս գալ՝ չեն ուզում ավելորդ խոսակցությունների առիթ դառնալ... Շապիկդ էլ հագիր:

ՏՂԱՄԱՐԴ – Անհանգստանում ես շների համա՞ր:

ԿԻՆ – Բա էլ ո՞ւմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ուրիշ ոչ ոք չկա՞:

ԿԻՆ – Կա, բայց պարզվում է, որ շները շատ ավելի հավատարիմ են:

ՏՂԱՄԱՐԴ – Այո... երևի...
(Պատրաստվում է գնալ: Դռան մոտ շրջվում է):
Ես կարո՞ղ եմ քեզ մի հարց տալ:

ԿԻՆ – Խնդրեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչո՞ւ ինձ միանգամից չասացիր:

ԿԻՆ – Ի՞նչ չասացի:

ՏՂԱՄԱՐԴ – Դե, այն, որ դու...

ԿԻՆ – Ասա, մի ամաչիր:

ՏՂԱՄԱՐԴ – Կարևոր չի... (Շրջվում է):

ԿԻՆ – Աստված իմ, ինչպիսի՞ նրբանկատություն... Գիտես, քո նման երանելիի վերջին անգամ ես հանդիպել եմ նանկապարտեզում: Բայց, որքան հիշում եմ, դա լրիվ ուրիշ պատմություն էր:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ պատմություն:

ԿԻՆ – Փոքրիկ տղայի և փոքրիկ աղջկա մասին... Կուզե՞ս պատմեն:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ, կարիք չկա:

ԿԻՆ – Հասկանում եմ, դու շտապում ես և նման դատարկամիտ խոստովանությունների կարիքը չունես:

ՏՂԱՄԱՐԴ – Բանը դրանում չի:
Պարզապես ինձ համար անսպասելի էր...

ԿԻՆ – *(Ծիծաղում է)* Որ գիշերն անցկացրել ես թեթև վարքի կնոջ անկողնում...

ՏՂԱՄԱՐԴ – Ես դա նկատի չունեի:

ԿԻՆ – Իսկ ի՞նչը... Միգուցե այն, որ միամիտ խախտեցիր բարոյական օրենքներից զուրկ կանանց հետ շփվելու կանոնակարգը: Եվ հիմա ավստոսում ես, որ չափից շատ սիրալիր էիր սովորական մարմնավաճառի հետ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես... ես ամենևին էլ չեմ զղջում դրա համար:

ԿԻՆ – Ասացե՛ք խնդրեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց...

ԿԻՆ – Ի՞նչ բայց:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ նախօրոք չասացիր...
Դրանում ոչ մի վատ բան չկա:

ԿԻՆ – Ի՞նչ ես թուփակի պես կրկնում՝ ինչու չասեցի՜ր, ինչու չասեցի՜ր: Իսկ դու ինչպե՞ս ես պատկերացնում, գիշերվա կեսին պետք է կանգնեի ու հայտարարեի. «Գիտե՞ս, սիրելիս, հանկարծ չչփոթվես, ես ամենևին էլ սուրբ չեմ, այլ ընդհակառակը, ընդամենը՝ սովորական պոռնիկ, որը սեր է վաճառում առաջին պատահած այցելուին...»:
Դու դա՞ էիր ուզում... *(Հուզված)*: Ասա՛, ի՞նչ ես լռում:

ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացի՛ր:

ԿԻՆ – Կներե՛ս... Հետո ես համոզված էի, որ դու ինքդ կհասկանաս: Գիտե՞ս, կան բաներ, որ մեր տարիքում պարզ են, և կարիք չկա ավելորդ անգամ խոսել դրանց մասին... Թե՞ դու ծանր մանկություն ես ունեցել:

ՏՂԱՄԱՐԴ – Դա կարևոր չի:

ԿԻՆ – Ճիշտ է: Կարևորը բավականությունն է, որ դու ստացար...
Հուսով եմ, որ այցելուն դժգոհելու առիթ չունի:

ՏՂԱՄԱՐԴ – *(Չոր)* Ո՛չ, ամեն ինչ պատշաճ մակարդակի վրա էր:

ԿԻՆ – Շնորհակալություն: Կլիենտի գնահատականը մեր գործում շատ կարևոր է:

ՏՂԱՄԱՐԴ – Տեսնում եմ՝ լավ փորձ ունես:

ԿԻՆ – Չես սխալվում:

ՏՂԱՄԱՐԴ – Եվ որքա՞ն ես պետք է վճարեմ:

ԿԻՆ – Ոչինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպե՞ս թե՛ ոչինչ:

ԿԻՆ – Դու իմ հորեյլանական հաճախորդն ես, այնպես որ ֆիրման ծախսերը վերցնում է իր վրա:

ՏՂԱՄԱՐԴ – Այսի՞նքն:

ԿԻՆ – Այսինքն՝ քեզ նվեր է անում: Շնորհավորո՞ւմ եմ:

ՏՂԱՄԱՐԴ – Շնորհակալություն: Եվ ի՞նչ անվանում ունի ձեր այդ բարեգործական հիմնարկը:

ԿԻՆ – Ի՞նչ նշանակություն ունի:

ՏՂԱՄԱՐԴ – Հասկանում եմ, դուք գովազդի կարիք չունեք:

ԿԻՆ – Այո, միանգամայն ճիշտ կռահեցիք, մենք գովազդի կարիք չունենք: Մենք առանց այդ էլ շատ ծանրաբեռնված ենք աշխատում:

ՏՂԱՄԱՐԴ – Ես նկատեցի... Բայց, այնուամենայնիվ, ինչպե՞ս է կոչվում ձեր ֆիրման, եթե, իհարկե, գաղտնիք չէ:

ԿԻՆ – Չէ, ի՞նչ գաղտնիք... ընդհակառակը: Ինչպես նկատեցիք՝ մենք միանգամայն թափանցիկ ենք աշխատում:

ՏՂԱՄԱՐԴ – Ես դա նկատեցի: Շատ գովելի է:

ԿԻՆ – Զգացված եմ: Ի դեպ, եթե ուզում եք շնորհակալական նամակ ուղղել ղեկավարությանը, կարող եք բանավոր ասել՝ ես կփոխանցեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ միայն նամակ:

ԿԻՆ – Որքան հասկացա, պարոնը ցանկանում է նորից մեզ այցելել:

ՏՂԱՄԱՐԴ – Ասենք թե:

ԿԻՆ – Օ՛, դա շատ հաճելի անակնկալ է մեզ համար: Բայց հիշեցնեմ, որ հաջորդ այցելությունը կլինի արդեն վճարովի...

ՏՂԱՄԱՐԴ – Հասկանում եմ:

ԿԻՆ – Իհարկե, որպես մշտական հաճախորդ, Ձեզ կտրամադրվեն համապատասխան զեղչեր...

ՏՂԱՄԱՐԴ – Ես անպայման կօգտվեմ զեղչերից: Բայց Դուք չասացիք, ինչպե՞ս է կոչվում Ձեր այս կազմակերպությունը:

ԿԻՆ – «Կակտուս»:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – «Կակտուս»: Ինչ է, բուսաբանության հետ է՞լ խնդիրներ ունեք...

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ, բուսաբանության հետ ես ոչ մի խնդիր չունեմ...

Դադար:

ԿԻՆ – Ուրիշ հարցեր կա՞ն:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ, երևի, չէ:

ԿԻՆ – Դե ուրեմն, գնաք բարով...

Տղամարդը պատրաստվում է դուրս գալ:

Դռան մոտ հնչում է հեռախոսազանգը:

ՏՂԱՄԱՐԴ – *(Բջջային հեռախոսով)* Լսում եմ... Այո, արդեն քաղաքում եմ... Ինքնաթիռն ուշացումով թռավ... Հենց նոր վայրէջք կատարեց... Չէ, դիմավորելու կարիք չկա: Շուտով կլինեմ: *(Անջատում է հեռախոսը)*: Սա...

ԿԻՆ – Հասկացա՞ խոհարարն էր:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Դե, ուզբեկական փլավի մասնագետը: Ճի՞շտ կռահեցի:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ:

ԿԻՆ – Կապ չունի: Բոլոր դեպքերում այսօր դու քո ճաշը հաստատ կերար:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ իմաստով:

ԿԻՆ – Եսի՞մ:... Դու էլ, հակառակի մեան, կուշտ ես... Ո՞նց ես փլավի տակից դուրս գալու, չգիտեմ: *(Գնում է խոհանոց)*:

ՏՂԱՄԱՐԴ – Լսիր, ի՞նչ ես կպել այդ փլավից: Իմիջիայլոց, ես նույնիսկ գաղափար չունեմ՝ ինչ տեսք ունի այդ...

*Կինը վերադառնում է խոհանոցից՝
մի ձեռքին կաթով լի բաժակ, մյուսում՝ բուտերբրոդ:*

ԿԻՆ – *(Ուտելով)* Փլավ՞վը...

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Ուրեմն, զոնե այդ հարցում նա չունի առավելություն իմ նկատմամբ... Մնում է պարզել, ուրիշ ի՞նչ պատճառ կար, որ քո ինքնաթիռը հարկադիր վայրէջք կատարեց երեկոյան իմ մեջարանում... Բայց դա արդեն անձամբ ինձ շատ քիչ է հուզում: Այնպես որ՝ ցտեսություն:

ՏՂԱՄԱՐԴ – Սպասիր...

ԿԻՆ – Եվ աշխատիր չաղմկել: Առանց այդ էլ հարևաններս ինչ ասես խոսում են իմ մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Ես չեմ հավատում քո ոչ մի խոսքին:

ԿԻՆ – Դու ի՞նչը նկատի ունես:

ՏՂԱՄԱՐԴ – Ես նկատի ունեմ «կակտուսները» ու նման հիմարությունները... Երեկ երեկոյան...

ԿԻՆ – Ի՞նչ երեկ երեկոյան...

ՏՂԱՄԱՐԴ – Ես չեի կարող սխալվել...

ԿԻՆ – Ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ – Այն, ինչ տեղի ունեցավ այնտեղ... *(նկատի ունի մնջարանը)* շատ անկեղծ էր՝ այդպես հնարավոր չի խաղալ...

ԿԻՆ – Ես չեի խաղում: Ես պարզապես օգնում էի հարկադիր վայրէջք կատարած ուղևորին: Դա... իմ աշխատանքն է:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՛չ:

ԿԻՆ – Լավ, ինչպես կուզես...

ՏՂԱՄԱՐԴ – Խնդրում եմ, ասա՛...

ԿԻՆ – Ի՞նչ ասեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Ասա, որ ամեն ինչ հորինել ես:

ԿԻՆ – Ոչինչ էլ չեմ հորինել:

ՏՂԱՄԱՐԴ – Հորինել ես: Ես համոզված եմ, որ ոչ մի «կակտուս» էլ չկա:

ԿԻՆ – Կա... չկա... Դա ի՞նչ է փոխում:

ՏՂԱՄԱՐԴ – Չգիտեմ...

ԿԻՆ – *(Տխուր ժպիտով)* Թվում է, որ մեր մասին ենք խոսում: Բայց...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ բայց:

ԿԻՆ – Բայց իրականում՝ միայն քո:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ իմաստով:

ԿԻՆ – Քեզ միայն քո «ե՛ս»-ն է հուզում՝ քո

չբավարարված «ես»-ը: Քեզ չի գոհացնում սովորական
այցելուի կարգավիճակը: Դու ուզում ես ստանալ նաև
«երազանքների ասպետ»-ի տիտղոսը...

Այո, այո, խոսքն իմ մասին չէ: Հինգ րոպե հետո դու ամեն ինչ
կմոռանաս՝ ինձ, անկողինը, շռայլ խոսքերդ... Կմնա միայն
թերի բավարարվածության զգացումը՝ բութ ու ճարպակալած
զգացում... Եվ դա է միակ պատճառը, որ դու այստեղ ես:
Դեռ ամեն ինչ չես ստացել...
Հիմա դու պայքարում ես լիակատար հաղթանակի համար...

ՏՂԱՄԱՐԴ – Ես սուրճ եմ ուզում:

ԿԻՆ – Արդեն սառն է:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչինչ, ես սառը կխմեմ:

*Տղամարդը նստում է, խմում է սուրճը:
Հանկարծ նկատում է սեղանի անկյունին դրված ծաղկամանով
կակտուսը:
Հասկանալով ամեն ինչ՝ ժպտում է:
Կինը վերցնում է այն սեղանից:*

ԿԻՆ – *(Շփոթված)* Լավ, ասենք թե ոչ մի «կակտուս» չկա...
Ես պարզապես անհատ ձեռներեց եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Դե, դա արդեն ամեն ինչ փոխում է:

ԿԻՆ – Այդպե՞ս ես կարծում:

ՏՂԱՄԱՐԴ – Այո:

ԿԻՆ – Եվ ի՞նչը:

ՏՂԱՄԱՐԴ – Ես հասկացա, որ դու պարզապես սուտասան ես:

ԿԻՆ – Ինքնաթիռների չվացուցակի մասին հեքիաթն է՞լ ես
մոզոնեցի:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ, ինքնաթիռների մասնագետը ես եմ:

ԿԻՆ – Շատ հաճելի էր ծանոթանալ: Դե, իմ մասնագիտության
մասին դու արդեն գիտես...

ՏՂԱՄԱՐԴ – Դեռ ոչ:

ԿԻՆ – «Երեխան բութ էր ու շատակեր»:

ՏՂԱՄԱՐԴ – Դու ի՞նչը նկատի ունես:

ԿԻՆ – Փլավը... *(Երկուսով ծիծաղում են):*

Հեռախոսազանգ է հնչում:

ՏՂԱՄԱՐԴ – *(խոսում է հեռախոսով)* Ասացի՛ շուտով կլինեն... Մի՛ անհանգստացիր: *(Անջատում է):*

ԿԻՆ – Դե ինչ, սուրճն էլ խմեցիր: Կարծում եմ, ժամանական է հավաքել իրերը և...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ձվածե՞ղը:

ԿԻՆ – Տանը կուտես:

ՏՂԱՄԱՐԴ – Իմ տունը հեռու է... Ես այստեղ գործով եմ...

ԿԻՆ – Պարզ է...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչն է պարզ:

ԿԻՆ – Սովորական ճղճիմ սիրավեպի պատմություն՝ գործուղում, ազատ երեկո, միամիտ զոհ... Թեպետ, զոհն այս դեպքում, ինչպես պարզվեց, այնքան էլ միամիտ չէր: Բայց, կարծում եմ, որ ընդհանուր առմամբ ես ճիշտ ներկայացրեցի քո ստեղծագործ մտքի փայլատակունմները:

ՏՂԱՄԱՐԴ – Դու չես սխալվում:

ԿԻՆ – *(Տխուր ժպիտով)* Շնորհակալություն անկեղծության համար... Իսկ պայուսա՞կը... Գործուղում գնալիս ընդունված է ճանփորդական պայուսակ վերցնել:

ՏՂԱՄԱՐԴ – Ես ընդամենը երկու օրով...

ԿԻՆ – Եվ որոշեցիր ժամանակը չկորցնել: Գովելի է... Յենց առաջին երեկոյից անցար գործի:
(Դադար):
Իսկ գիտե՞ս, ես ոչնչի համար չեմ զղջում: Վերջ ի վերջո, սրա մեջ լավ բան էլ կա՝ հանդիպեցինք, բաժանվեցինք, մոռացանք: Առանց ավելորդ զիզի-բիզի բաների՝ առողջ ֆիզիկական պահանջների բավարարում...
Չվածեղ կուտե՞ս:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – Դու, կարծեմ, ձվածեղ էիր ուզում... Հիմա կպատրաստեմ:
(Դուրս է գալիս):
(Լսվում է ձայնը): Դու ձվածեղ ինչո՞վ ես սիրում... երշիկո՞վ, պանրո՞վ, լոլիկո՞վ:

ՏՂԱՄԱՐԴ – Չվո՞վ...

(Անհանգիստ նայում է ժամացույցին): Արդեն ժամը երեքն է:

ԿԻՆ – Յետո՞ ինչ:

ՏՂԱՄԱՐԴ – Դու ասացիր, որ զբաղված ես:

ԿԻՆ – Ոչինչ, ամեն օր չէ, որ մերձավորին կերակրելու հնարավորություն է ընձեռնվում: Վերջ ի վերջո, տառապյալներին օգնելը մեր սուրբ պարտականությունն է:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՞ւմ՝ ձեր:

ԿԻՆ – *(ժպտալով)* «Կակտուս» ֆիրմայի աշխատակիցների:

Ներս է մտնում ձվածեղով:

ԿԻՆ – Փորձիր... Ջգույշ, կարող է տաք լինի... Եթե աղը քիչ է, կավելացնեն:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ, շատ համեղ է... Ես ձվածեղ հենց այսպես հում եմ սիրում:

ԿԻՆ – Ոնց, իսկապե՞ս հում է:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ, կատակեցի, ամեն ինչ լավ է:

ԿԻՆ – *(Շփոթված)* Մտածեցի՝ որ արագ լինի... Երևի պետք էր մի քիչ երկար պահել կրակի վրա:

ՏՂԱՄԱՐԴ – Մի՛ անհանգստացիր, ինձ այսքանն էլ էր շատ:

Տղամարդն ուտում է, Կինը նայում է նրան:

ԿԻՆ – Եիշտ եմ ասում՝ սոված տղամարդը...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ:

ԿԻՆ – *(Ծիծաղում է)* Սոռացա... Դու այնպես համով ես ուտում՝ չփչփացնելով...

ՏՂԱՄԱՐԴ – Կներե՛ս:

ԿԻՆ – Ի՛նձ կներես... Ամեն բոպե խանգարում եմ:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ...

ԿԻՆ – Դու կեր, ինձ վրա ուշադրություն մի դարձրու...

ՏՂԱՄԱՐԴ – Ես այսպես համեղ ձվածեղ կյանքում դեռ չէի կերել:

ԿԻՆ – Խմել կուզե՞ս:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ կարելի՞ է:

ԿԻՆ – *(Բերում է շիշը, լցնում է բաժակների մեջ)* Ի՞նչ է նշանակում «կարելի է»: Դիմացն ընդամենը երկու օր է: 48 ժամ և կյանքը, սատանա՛ն տանի, կա՛-վա՛րտ-վի՛...

ՏՂԱՄԱՐԴ – *(Անսպասելի լրջանալով)* Ի՞նչ:

ԿԻՆ – *(Ծիծաղելով)* Ես նկատի ունեմ այս կյանքը: Կենա՛ցդ, իմ երազանքների ժամանակավոր ասպետ...

ՏՂԱՄԱՐԴ – Դու զարմանալի կի՞ն ես:

ԿԻՆ – Ես համոզված եմ, որ այդ տափակությունը դու կրկնել ես հազար անգամ, հազարավոր ամենագորշ ու պարզունակ կանանց: Բայց միևնույն է, հաճելի է լսել...
(խաղում է): Իսկապե՛ս, իսկապե՛ս, ես զարմանալի եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Շա՛տ:

ԿԻՆ – Չէ, այդպես չէ:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչպե՞ս:

ԿԻՆ – Նախ, դու պետք է զարմացած ձեռքերդ մեկնես: Այ, այսպես...

ՏՂԱՄԱՐԴ – Չետո՞:

ԿԻՆ – Չետո վեր թռնես տեղիցդ, ծնկի իջնես և նոր շշուկով ասես.
«Շա՛տ, դու շա՛տ զարմանալի կի՞ն ես»:

ՏՂԱՄԱՐԴ – Պարզ է:

ԿԻՆ – Ոչինչ էլ պարզ չէ, ամենակարևորը մոռացանք:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչը:

ԿԻՆ – Չամբույրը...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ համբո՞ւյրն ինչի համար:

ԿԻՆ – Չամբույրը կհաստատի քո պոռթկումի անկեղծությունը...
Դե ինչ, փորձե՛ճք:

ՏՂԱՄԱՐԴ – Չիմա՞:

ԿԻՆ – Բա էլ ե՞րբ: Մոռանո՞ւմ ես, որ մեզ քիչ ժամանակ է մնացել...
Եվ այսպես *(խաղում է)*, իսկապե՛ս, իսկապե՛ս ես զարմանալի կի՞ն եմ:

ՏՂԱՄԱՐԴ – Շա՛տ:

ԿԻՆ – Չէ, ձեռքերդ մոռացար:

ՏՂԱՄԱՐԴ – *(Ձեռքերը պարզած)* Շա՛տ:

ԿԻՆ – Չիմա ծնկի իջիր և համբուրիր:

Տղամարդը փորձում է համբուրել:

ԿԻՆ – Չէ, շատ մի ոգևորվիր, սա ընդամենը թատրոն էր:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՞նց թե թատրոն էր:

ԿԻՆ – Հա՛: Մենք էլ ներկայացում էինք խաղում՝ «Ռոմեո և Ջուլետ»:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ինչ է, թատրոնում չե՞ն համբուրվում: «Ռոմեո և Ջուլետ»-ի մեջ, ինչքան գիտեմ, այդ անչափահասները լավ էլ...

ԿԻՆ – Ճիշտ է, համբուրվում են, բայց ոչ իրական:

ՏՂԱՄԱՐԴ – Այսի՞նքն:

ԿԻՆ – Չգիտեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Դե, որ չգիտես, խելոք նստիր ու մի դիմադրիր: (*Փորձում է համբուրել*):

ԿԻՆ – Սպասի՛ր: Հիշեցի՛:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ հիշեցիր:

ԿԻՆ – Հիշեցի՛ թատրոնում ինչպես են համբուրվում:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպե՞ս:

ԿԻՆ – Այ, այսպես (*ցույց է տալիս*) շուրթերը մոտեցնում են, հետո աննկատ շրջվում ու իբր թե համբուրվում: Բայց իրականում ոչինչ էլ չեն անում...

ՏՂԱՄԱՐԴ – Բա, ի՞նչ են անում:

ԿԻՆ – Այսպիսի ձայներ են հանում՝ «օ՛հ», «ա՛»:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ:

ԿԻՆ – Իբր շատ գայթակղված են...

ՏՂԱՄԱՐԴ – Ուրեմն, գայթակղվելիս «օ՛հ», «ա՛» է պետք անե՞լ:

ԿԻՆ – Ընդհանրապես, երևի չէ, բայց թատրոնում այդպես ավելի արտահայտիչ է:

ՏՂԱՄԱՐԴ – Ո՞ւմ համար:

ԿԻՆ – Հանդիսատեսի:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ավելի հեշտ չէ՞ր լինի պարզապես համբուրվելին:

ԿԻՆ – (*Ձարմացած*) Դու ո՞նց ես պատկերացնում, ամեն երեկո այդ խեղճ դերասանները բարձրանան բեմ ու լպստեն իրար:

ՏՂԱՄԱՐԴ – Հա՛: Ի՞նչ կա որ:

ԿԻՆ – Իսկ եթե ասենք, մեկի ատամը ցավո՞ւմ է:

ՏՂԱՄԱՐԴ – Հիմա քո ատամը ցավո՞ւմ է:

ԿԻՆ – Չէ, ես որպես օրինակ ասացի:

ՏՂԱՄԱՐԴ – Աստվա՛ծ իմ, ինչքան դժվար է ապրել խելացի կնոջ հետ:
(*Կանգնում է աթոռին*): Ժողովուրդ, նայե՛ք ինձ և խղճացեք ձեզ:

ԿԻՆ – Պատկերացնում եմ՝ ինչ շրջապատում ես մեծացել... Լա՛վ, ես էլ թատրոնի մասին բան չեմ ասի:

ՏՂԱՄԱՐԴ – Քո կարծիքով՝ մենք հիմա թատրոնի մասի՞ն էինք խոսում:

ԿԻՆ – Չէ՞...

ՏՂԱՄԱՐԴ – Չէ՛: Ես ընդամենը ուզում էի քեզ համբուրել: Բայց դու այնպես բարդացրեցիր, որ իսկապես դառավ թատրոն:

ԿԻՆ – Կներե՛ս: Պարզապես ինձ թվաց, որ այդպես ավելի հետաքրքիր կլինի:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչը:

ԿԻՆ – Համբուլորը:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչպե՞ս թե՛ ավելի հետաքրքիր:

ԿԻՆ – Դե, պայմանական: Հասկանո՞ւմ ես, սովորականը մենք արդեն գիտենք ոնց է լինում: Հիմա էլ թատերականը փորձենք:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչի՞ համար:

ԿԻՆ – Ընդհանուր զարգացման: Չե՞ս ուզում քեզ մի քիչ դերասան զգալ:

ՏՂԱՄԱՐԴ – Չգիտեմ...

ԿԻՆ – Դրա համար էլ ասում եմ՝ արի փորձենք:

ՏՂԱՄԱՐԴ – Չեմ հասկանում, դու լո՞ւրջ ես ասում:

ԿԻՆ – Միանգամայն... Ուզո՞ւմ ես երդվեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Հա՛:

ԿԻՆ – Երդվում եմ... աշխարհի բոլոր համապատասխան սրբերով:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, համոզեցիր: Հիմա ի՞նչ պետք է անեն:

ԿԻՆ – Մոտեցիր ինձ... Մի վախեցիր: Հիմա շրջվիր, այտդ մոտեցրու ու...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ «ու»:

ԿԻՆ – Ձայներ հանիր՝ իբր համբուրվում ենք:

Տղամարդն անհեթեթ ձայներ է հանում:

ՏՂԱՄԱՐԴ – Հիմարություն:

ԿԻՆ – Անկեղծ ասած, իմ դուրն էլ չեկավ:

ՏՂԱՄԱՐԴ – Որ ասում է՞ի:

ԿԻՆ – Բոլոր դեպքերում պետք էր ստուգել, որ հաստատ իմանայինք:

ՏՂԱՄԱՐԴ – Երբեք չէի ուզի աշխատել թատրոնում:

ԿԻՆ – Ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ – Որովհետև այնտեղ ամեն անգամ համբուրվելու փոխարեն, պարզվում է, այբուբենը պիտի արտասանես. ոչ մի նորմալ տղամարդ չէր դիմանա այդ կտտանքներին:

ԿԻՆ – Թատրոնում, համբուրվելուց բացի, ուրիշ բաներ էլ են անում:

ՏՂԱՄԱՐԴ – Ճիշտ է, ես էլ եմ ուզում համբուրվելուց բացի... ուրիշ բաներ անել...

ԿԻՆ – *(Ոտքի է կանգնում)* Սպասիր... Ես... կենաց եմ ուզում ասել:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ եթե մի քիչ հետո՞:

ԿԻՆ – Չէ, մի քիչ հետո ուշ կլինի: Եվ հետո ես գիտեմ, որ քո մի քիչն այնքան էլ մի քիչ չի...

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, միայն արագ:

ԿԻՆ – *(Լցնում է բաժակները)* Մեր սիրո կենացը:
Լավ ասացի... Ինչո՞ւ չէ: Արի պատկերացնենք, որ մենք խելագարի պես սիրում ենք միմյանց... Չէ, ավելի լավ է՝ դու ես խելագարի պես ինձ սիրում, իսկ ես...

ՏՂԱՄԱՐԴ – «Կակտոուս»-ի բոլոր հաճախորդներին:

ԿԻՆ – Ոչ բոլորին, միայն մեկին:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ մնացածի՞ն:

ԿԻՆ – Մնացածին ես գժի պես հարգում եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Խմեցի՞նք:

ԿԻՆ – Խմեցի՞նք:

Խնում են:

ՏՂԱՄԱՐԴ – *(Հանդիսավոր)* Դե ինչ, ահա և հասավ վաղուց սպասված իսկության պահը:

ԿԻՆ – Ի՞նչ պահ:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկության... Մի՛ խանգարի... Ես հիշում եմ, Դուք սիրո մասին ինչ-որ բան էիք ասում, տիկին:

ԿԻՆ – *(Իբր վախեցած)* Ե՞ս... Սիրո մասի՞ն... բա՞ն էի ասում:

ՏՂԱՄԱՐԴ – Այո՛: Եվ մի՛ փորձեք խորշել:

ԿԻՆ – Օ՛-օ՛-օ՛...

ՏՂԱՄԱՐԴ – Այս անգամ դա Ձեզ չի հաջողվի, մադամ:

ԿԻՆ – Աստված իմ, Դուք ուզում էիք ասել, որ ես...

ՏՂԱՄԱՐԴ – Այո, տիկին, ես վկաներ ունեմ:

ԿԻՆ – Որտե՞ղ են նրանք:

ՏՂԱՄԱՐԴ – Ովքե՞ր:

ԿԻՆ – Ձեր վկաները:

ՏՂԱՄԱՐԴ – Այստեղ: *(Բնական է, որ խոսքը զնում է հենց իր մասին):*

ԿԻՆ – Ուրեմն, Դուք պնդում եք, որ ես քիչ առաջ ինչ-որ բանե՞ր էի ասում սիրո մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Հարգանքներիս խորին հավաստիքը, մադամ, բայց դա է ճշմարտությունը:

ԿԻՆ – Ի՞նչ անհեթեթություն...

ՏՂԱՄԱՐԴ – Անհեթեթություն՞:

ԿԻՆ – Այո, պարոն, ես չէի ասում սիրո մասին, ես գոռում էի դրա մասին:

Այ, այսպես՝ ա՛-ա՛-ա՛... *(Տղամարդը վախեցած փորձում է փակել նրա բերանը):*

ՏՂԱՄԱՐԴ – Կամա՛ց՝ հարևանները...

ԿԻՆ – Մի անհանգստացիր, ես խելագար չեմ, պարզապես մի քիչ հարթել եմ... Եվ հետո...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ հետո:

ԿԻՆ – Եթե գիտես, որ բռնաբարությունն անխուսափելի է, հարկավոր է թուլանալ և ստանալ առավելագույն հաճույք:

ՏՂԱՄԱՐԴ – Այսի՞նքն:

ԿԻՆ – Այսինքն՝ թուլացիր և աշխատիր ստանալ մաքսիմալ հաճույք, միևնույն է, պիտի՛ բռնաբարեմ... *(Ծիծաղում է):*

Կինն ինչ-որ խելագար պար է պարում, որն ավելի շուտ նման է ստրիպտիզի:

ԿԻՆ – *(Ընդհատելով պարելը)* Ինչո՞ւ ես ժպտում:

ՏՂԱՄԱՐԴ – Ես չեմ ժպտում: Ես պարզապես հիանում եմ:

ԿԻՆ – Ո՛չ, ժպտում ես:
Ես գիտեմ, որ վատ եմ պարում:

ՏՂԱՄԱՐԴ – Դու սքանչելի ես պարում:

Շարունակում է պարը:

ԿԻՆ – Վերջ, արի խմենք:

ՏՂԱՄԱՐԴ – Ես այդպես էլ գիտեի:

ԿԻՆ – Ի՞նչ գիտեիր:

ՏՂԱՄԱՐԴ – Ոնց որ քո սիրած թատրոնում՝ ամենակարևոր պահին լույսերը հանգում են կամ հերոսուհու մոտ նոր հանճարեղ մտահղացում է ծագում, որը ոչ մի կապ չունի տվյալ պահի ու իմ ցանկության հետ:

ԿԻՆ – *(Ծիծաղելով)* Դու պարզապես չափի զգացում չունես:

ՏՂԱՄԱՐԴ – Այսի՞նքն:

ԿԻՆ – Այսինքն՝ հաճույքը պետք է վայելել աստիճանաբար: Եվ հետո...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ հետո:

ԿԻՆ – Կինը պետք է մի քիչ գաղտնիք մնա:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ մնա:

ԿԻՆ – Գաղտ – նի՛ք...

ՏՂԱՄԱՐԴ – Տեսնես այդ հիմարությունն ո՞վ է մոգոնել:

ԿԻՆ – Երևի՛ տղամարդիկ:

ՏՂԱՄԱՐԴ – Բացառվո՞ւմ է: Տղամարդը նման անհեթեթություն չէր կարող հնարել:

ԿԻՆ – Ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ – Մենք հո մեր թշնամին չե՞նք:

ԿԻՆ – Չգիտեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Դու պատկերացնո՞ւմ ես նորմալ տղամարդու, որը տեսնում է, թե ինչպես է կինը մերկանում և հայտարարում է. «Վերջ, տիկին, պետք չէ շարունակել: Թող մնացածը գաղտնիք մնա»:

*Տղամարդը բորբոքված աջ ու ձախ է գնում:
Կինը ժպտալով հետևում է նրան:*

ԿԻՆ – Գիտե՞ս, ինչն է ամենագայթակղիչը քո մեջ... Այն, որ ես նույնիսկ գաղափար չունեմ, թե դու ով ես, ինչպես և որ քամին քեզ բերեց մեր քաղաք... Եվ ես՝ սովորական անհատ ձեռներեցս, պարտավոր եմ սպասարկել քեզ ամենաբարձր մակարդակով...

ՏՂԱՄԱՐԴ – Կարծում եմ, դա բնական է: Չե՞ որ ես քո հոբելյանական հաճախորդն եմ...

ԿԻՆ – Ճիշտ է, լրիվ մոռացել էի... Հրամայե՛ք, Ձերո պայծառափայլություն, Ձեր խոնարհ ծառան պատրաստ է կատարել բոլոր քնահաճույքները:

Հնչում է հեռախոսազանգ:

ՏՂԱՄԱՐԴ – Լսիր, այս հեռախոսն ո՞վ է հնարել:

ԿԻՆ – Բելը:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ Բել:

ԿԻՆ – Դու ուզում ես իմանալ, ով է հնարել հեռախոսը, ես քեզ հուշում եմ՝ ամերիկացի գյուտարար Բելը, 1875 թվին... Ես օրացույցում եմ կարդացել... Պատասխանիր, ես կսպասեմ:

ՏՂԱՄԱՐԴ – *(խոսում է հեռախոսով)* Ոչինչ չի պատահել... Պարզապես ես հիմա մի քիչ զբաղված եմ:

ԿԻՆ – *(խոսափողի կողմը)* Մենք նրան բռնաբարում ենք:

ՏՂԱՄԱՐԴ – *(Չեռախոսով)* Չէ, երևի գծերն են խառնվել...
Ես հետո քեզ կզանգեն:

ԿԻՆ – Կներես...

ՏՂԱՄԱՐԴ – Ոչինչ:

ԿԻՆ – Չգիտեմ, ինչպես ստացվեց...

ՏՂԱՄԱՐԴ – Սարսափելի բան չկա...

ԿԻՆ – Միգուցե իսկապե՞ս գնաս՝ քեզ սպասում են:

ՏՂԱՄԱՐԴ – Կհասցնեն... Եվ հետո...

ԿԻՆ – Ի՞նչ հետո:

ՏՂԱՄԱՐԴ – Այնտեղ, որտեղ ինձ սպասում են, ես հաստատ
հոբելյանական հաճախորդ չեմ...

ԿԻՆ – Իսկ որտե՞ղ են քեզ սպասում...

ՏՂԱՄԱՐԴ – Կարևոր չէ:

ԿԻՆ – Չետաքրքիր է իմանալ, դու ո՞վ ես:

ՏՂԱՄԱՐԴ – *(Փոքր դադարից հետո)* Կարող եմ ասել:

ԿԻՆ – Չէ, պետք չի... Այսպես ամեն ինչ շատ ավելի խորհրդավոր է...
Չամենայնդեպս՝ ինձ համար:

ՏՂԱՄԱՐԴ – Դու իսկապես չե՞ս ուզում իմանալ՝ ես ով եմ:

ԿԻՆ – Չէ, բայց, եթե ցանկանում ես, կարող եմ գուշակել:

ՏՂԱՄԱՐԴ – Փորձիր:

ԿԻՆ – *(Ուշադիր զննում է)* Դու շատ հայտնի կինոռեժիսոր ես և եկել
ես մեր քաղաք քո նոր ֆիլմի համար:
Չանկարծ տեսար ինձ և հասկացար, որ միայն ես կարող եմ
խաղալ գլխավոր դերը:
Չիմա դու կհայտարարես դրա մասին, ես երջանկությունից
կցատկեմ քո գիրկը, և դու մոտակա երկու օրը կամես ինձ հետ
այն ամենն, ինչ կամենաս, թեպետ ես առանց այդ էլ, կարծես
թե, ամեն ինչ արեցի...

ՏՂԱՄԱՐԴ – Տպավորի՛չ է: Չետո՞:

ԿԻՆ – Չետո կպարզվի, որ դու այդ նույն առաջարկն արել էիր ևս 200
ուրիշ միամիտ աղջիկների:

ՏՂԱՄԱՐԴ – Չկռահեցիր:

ԿԻՆ – Դե, կարող է ոչ թե 200, այլ ընդամենը 198:

ՏՂԱՄԱՐԴ – Դու չկռահեցիր մասնագիտությունս:

ԿԻՆ – Այսինքն, դու կինոռեժիսոր չես:

ՏՂԱՄԱՐԴ – Ցավոք, ո՛չ...

ԿԻՆ – Դե լավ, շարունակենք: Դու միլիոնատեր ես, սովորական միլիոնատեր: Իսկ ես՝ թեթև վարքի, բայց շատ ազնիվ ու բարի աղջիկ եմ:
Դա շատ հայտնի ու պարզունակ պատմություն է և ինձ առանձնապես չի հետաքրքրում:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ:

ԿԻՆ – Գիտե՞ս, մոխրոտիկների մասին հեքիաթներն ինձ վաղուց արդեն չեն ոգևորում, մանավանդ՝ միլիոնատեր արքայազների մասնակցությամբ:

ՏՂԱՄԱՐԴ – Այնուամենայնիվ...

ԿԻՆ – Լավ: Դու հոգնել ես բազմաթիվ երկրպագուներից, որոնք միայն քո հարստությանն են տենչում, և երազում ես հանդիպել մի անմեղ...

ՏՂԱՄԱՐԴ – Անհատ ձեռներեցի...

ԿԻՆ – Թեկուզ... Հիմա դու կհայտնես քո ով լինելը, և ես երջանկությունից կցատկեմ քո գիրկը, և մոտակա երկու օրը դու կանես ինձ հետ ինչ կամենաս...

ՏՂԱՄԱՐԴ – Ափսո՞ւ:

ԿԻՆ – Ի՞նչը՝ ափսոս:

ՏՂԱՄԱՐԴ – Ափսոս՝ ես միլիոնատեր չեմ:

ԿԻՆ – Իսկապե՞ս:

ՏՂԱՄԱՐԴ – Այո, բայց ինձ հետաքրքրեց հեռանկարը:

ԿԻՆ – Ի՞նչ հեռանկար:

ՏՂԱՄԱՐԴ – Ցատկելու հետ կապված:

ԿԻՆ – Ցատկելու համար անպայման չի լինել միլիոնատեր:

ՏՂԱՄԱՐԴ – Այ դա հուսադրում է:

ԿԻՆ – Չեմ հասկանում, քեզ իմ ցայտկե՞լն է հետաքրքրում, թե ճիշտ գուշակությունս:

ՏՂԱՄԱՐԴ – Որքան հասկանում եմ, մեկը մյուսից անբաժան է:

ԿԻՆ – Որոշ իմաստով՝ այո:

ՏՂԱՄԱՐԴ – Պարզ է... Իսկ ուրիշ տարբերակներ կա՞ն:

ԿԻՆ – Կան: Դու վարձու մարդասպան ես: Քեզ հանձնարարված է վերացնել ինձ, չգիտեմ ինչու, կարծում եմ, դա այդքան էլ կարևոր չէ: Դու եկել ես մեր քաղաք, գտել ինձ և վերջին պահին խղճի խայթ զգացել, և փոխարենը տեղի ունեցավ այն, ինչ տեղի ունեցավ... Հիմա դու կհայտնես դրա մասին...

ՏՂԱՄԱՐԴ – Ինչի՞ մասին:

ԿԻՆ – Դե, որ որոշեցիր ինձ չսպանել... և ես երջանկությունից կցատկեմ քո գիրկն ու մոտակա երկու օրը... դե, դու գիտես շարունակությունը... Կռահեցի՞:

ՏՂԱՄԱՐԴ – Համարյա:

ԿԻՆ – *(Անհանգստացած)* Ո՞նց:

ՏՂԱՄԱՐԴ – Իմ այստեղ գտնվելը իրոք կյանքի ու մահվան հետ է կապված...

ԿԻՆ – Չեմ հասկանում, ի՞նչ իմաստով:

ՏՂԱՄԱՐԴ – Կարևոր չէ:
Ի դեպ, խոսելով մարդասպանների մասին, դու մոռացար մոլագարներին:

ԿԻՆ – Այսի՞նքն...

ՏՂԱՄԱՐԴ – Երեկ ուրբա՞թ էր:

ԿԻՆ – Այո:

ՏՂԱՄԱՐԴ – Ուրեմն, ամեն ինչ ճիշտ է:

ԿԻՆ – Ի՞նչն է ճիշտ:

ՏՂԱՄԱՐԴ – Ամեն ուրբաթ երեկոյան ես գնում եմ սրճարան, նոր զոհ եմ գտնում և...

ԿԻՆ – Վերջ տուր...

ՏՂԱՄԱՐԴ – Անհրաժեշտ է, որ զոհը լինի գեղեցիկ և ձվածեղ պատրաստել իմանա...

ԿԻՆ – Վերջ տուր, թե չէ կգոռամ:

ՏՂԱՄԱՐԴ – Հա, հիշում եմ, դու շատ հետաքրքրասեր հարևաններ ունես:

ԿԻՆ – Ասացի՛ վե՛րջ տուր:

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, ես կատակեցի՛ կարող ես երջանկությունից ցատկել իմ գիրկը և մոտակա երկու օրը *(փորձում է գրկել)...* Շարունակե՞մք...

ԿԻՆ – Չե՛մ ուզում...

Յնչում է հեռախոսագանգը:

ՏՂԱՄԱՐԴ – *(խոսում է հեռախոսով)* Ասացի՛ շուտով կլինեն: Իզուր ես անհանգստանում, ամեն ինչ լավ կլինի... *(Անջատում է):*

ԿԻՆ – *(Տղամարդուն ուշադիր նայելուց հետո)* Գիտե՞ս, սերիական մարդասպան լինելու համար դու չափից դուրս անզգույշ ես:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ:

ԿԻՆ – Դե, այս զանգերը...

ՏՂԱՄԱՐԴ – Մի անհանգստացիր, սա իմ գործընկերն էր:

ԿԻՆ – Ո՞վ:

ՏՂԱՄԱՐԴ – Հաշվապահս: Նա գրանցում է իմ բոլոր զոհերին: Հասկանո՞ւմ ես, այս գործը ճշտապահություն է պահանջում՝ ո՞վ, ե՞րբ, ինչպե՞ս... Այ, օրինակ՝ անցյալ ուրբաթ, խեղճ աղջիկը չհասցրեց ասել իր անունը, և մենք ստիպված էինք գրանցել նրան «Մադամ X» ծածկանվան տակ: Լավ չստացվեց, բայց հավաստիացնում եմ՝ նման վրիպումներ շատ քիչ են լինում մեր աշխատանքում: Ընդհանրապես զոհը միշտ էլ հաճույքով է ներկայանում:

ԿԻՆ – Չմոտենա՛ս...

ՏՂԱՄԱՐԴ – Լավ, ինչպես կուզես... Ես դեռ ժամանակ ունեմ:

ԿԻՆ – Ինչքա՞ն ժամանակ:

ՏՂԱՄԱՐԴ – 48 ժամ:

ԿԻՆ – Հետո՞:

ՏՂԱՄԱՐԴ – *(Քմծիծաղ տալով)* Հետո՛ Աստված գիտի... Մարդու կյանքը մազից է կախված... «Չի՛ք» ու չկա... Մի անհանգստացիր, խոսքս քո մասին չէ:

ԿԻՆ – Ասա՛:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ ասեմ:

ԿԻՆ – Ասա, որ սա կատակ էր:

ՏՂԱՄԱՐԴ – Ես արդեն ասացի, բայց դու ինձ չես լսում:

ԿԻՆ – Նորից ասա:

ՏՂԱՄԱՐԴ – Սա կատակ էր... Ուզո՞ւմ ես ապացուցեմ:

ԿԻՆ – Ինչպե՞ս... Չմոտենա՛ս... կգոռա՛մ....

ՏՂԱՄԱՐԴ – Լա՛վ:

ԿԻՆ – Դե... ապացուցի՛ր:

ՏՂԱՄԱՐԴ – Ես հիմա կգնամ, և դու կհամոզվես, որ ես մարդասպան չեմ: *(Պատրաստվում է հեռանալ):*

ԿԻՆ – Սպասի՛ր... Ես քեզ հավատում եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Շնորհակալություն վստահության համար, տիկին:

ԿԻՆ – Իսկապես... Դու շատ բարի աչքեր ունես...

ՏՂԱՄԱՐԴ – Դրանք դնովի են:

ԿԻՆ – Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Գործի գնալիս ես միշտ բարի աչքեր եմ հագնում, որպեսզի մոլորեցնեմ նախատեսված զոհին...

ԿԻՆ – Նորի՞ց:

ՏՂԱՄԱՐԴ – Վե՛րջ, էլ չեմ կատակի... Արի հարբենք, ես այնքան վաղուց չեմ խմել: *(Լցնում է բաժակները):*
Իմիջիայլոց, քո բոլոր վարկածները մի ընդհանուր լավ բան ունեն:

ԿԻՆ – Ի՞նչ:

ՏՂԱՄԱՐԴ – Վերջաբանը՝ երբ դու ցատկում ես իմ գիրկը:

ԿԻՆ – *(Ծիծաղելով)* Դրան նախ պետք է արժանանալ:

ՏՂԱՄԱՐԴ – Բայց ես հիշում եմ, երեկոյան...

ԿԻՆ – Երեկոյան ես քո մասին շատ քիչ բան գիտեի:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ հիմա՞...

ԿԻՆ – Իսկ հիմա մենք պարզեցինք, որ դու ոչ միլիոնատեր ես, ոչ աստղ, ոչ էլ...

ՏՂԱՄԱՐԴ – Մարդասպան...

ԿԻՆ – Այո...

ՏՂԱՄԱՐԴ – Դու ուզում ես ասել, որ մնացած մասնագետները նման հաճույքի արժանի չե՞ն:

ԿԻՆ – Մնացած մասնագիտությունների տեր մարդիկ իրենք են ցատկում:

ՏՂԱՄԱՐԴ – Այսինքն, դու առաջարկում ես...

ԿԻՆ – Ես ոչինչ էլ չեմ առաջարկում...

Յնչում է հեռախոսազանգը:

ՏՂԱՄԱՐԴ – Ես հիմա կկոտրե՞մ այս հեռախոսը:

Յեռախոսազանգը շարունակվում է:

ԿԻՆ – Գուցե իսկապես գնա՞ս:

ՏՂԱՄԱՐԴ – Կհասցենեմ... Արի չչեղվենք:

Յեռախոսազանգը շարունակվում է:

ԿԻՆ – Դու ամուսնացա՞ծ ես:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ... արդեն՝ ոչ:

ԿԻՆ – Յասկանում եմ՝ մինչև գործուղման վերջը բոլոր տղամարդիկ ամուրի են:

ՏՂԱՄԱՐԴ – Չգիտեմ... Մենք իրոք բաժանվել ենք, բայց...

ԿԻՆ – Ի՞նչ բայց:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչինչ:

ԿԻՆ – Դու նրան սիրում ես:

ՏՂԱՄԱՐԴ – Բանն ամենևին էլ դրանում չի:

ԿԻՆ – Կներես: Ես երևի իրավունք չունեմ նման հարցեր տալու... Իսկ դու պարտավոր չես ինձ պատասխանել: Մենք պարզապես արձակուրդ ենք վերցրել երկու օրով, այդպես չէ՞:

ՏՂԱՄԱՐԴ – Այդպես է...

ԿԻՆ – Այդ ի՞նքն էր զանգում:

ՏՂԱՄԱՐԴ – Այո...

ԿԻՆ – Անհանգստանում է... ուրեմն՝ սիրում է... Գիտես, ես չեմ ուզում

կառուցել իմ երջանկությունը, ինչպես ասում են, ուրիշի
դժբախտության վրա... թեկու՞՞ երկու օրով....

ՏՂԱՄԱՐԴ – Դու ոչինչ չհասկացար: Մենք իսկապես բաժանվել ենք և
նույնիսկ, ինչպես տեսնում ես, ապրում ենք տարբեր
քաղաքներում: Նա՛՝ այստեղ, ես...

ԿԻՆ – Քո կինը այստե՞ղ է ապրում:

ՏՂԱՄԱՐԴ – Այո...

ԿԻՆ – Ինչպե՞ս...

ՏՂԱՄԱՐԴ – Չեմ հասկանում, դրա մեջ ի՞նչ զարմանալի բան կա:

ԿԻՆ – Պարզվում է, որ դու սրիկա՛ ես...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ...

ԿԻՆ – Այո, վավաշոտ սրիկա՛՝ նա քեզ սպասում է, իսկ դու որոշեցիր
առիթը բաց չթողնել... Ինչո՞ւ ոչ... Օդանավակայանից դու
մտար սրճարան և առաջին պատահած հիմարին տարար
անկողին: Ի՞նչ է եղել՝ սովորական պատմություն...

ՏՂԱՄԱՐԴ – Այդպես չէ՛:

ԿԻՆ – Գիտե՞ս, ես ֆիզիկապես չեմ տանում նման սրտաճնլիկ
տեսարաններ, մանավանդ, որ դրա իրավունքը չունեմ...
Հասկանում եմ, դու օգտվեցիր առիթից... Ցանկացած
տղամարդ երևի քեզ պես կվարվեր...
Բայց, կներես, ինձ մոտ այնպիսի զգացում է, կարծես աղբի
մեջ եմ թավալվել...

Դադար:

ՏՂԱՄԱՐԴ – Ես գնամ:

ԿԻՆ – Գնա՛...

*Տղամարդը դուրս է գալիս:
Կինը հիստերիայի մեջ է:
Հնչում է հեռախոսազանգը:
Կինը վերցնում է նրա լսափողը:*

ԿԻՆ – Լսում եմ... Ոչ նա այստեղ չի... Նա... շուտով կլինի...
Հեռախոսը... Ի՞նչ հեռախոսը...
Ա՛խ, հա... նա մոռացավ... *(Անջատում է):*

*Հնչում է դռան զանգը:
Տղամարդը ներս է մտնում:*

ՏՂԱՄԱՐԴ – Ես մոռացել էի հեռախոսը:

Յնչուն է հեռախոսի զանգը: Տղամարդը պատասխանում է:

ՏՂԱՄԱՐԴ – Այո, ես եմ... Ոչինչ չի պատահել... Չէ, դու նրան չես ճանաչում... Ի՞նչ է նշանակում «ծանոթ ձայն էր»... Ո՞վ... Լավ, սպասիր, ես շուտով կգամ... Չենք ուշանա... *(Անջատում է):*
Ես չեի ուզեմ այսպես հեռանալ:

ԿԻՆ – Ինչպե՞ս:

ՏՂԱՄԱՐԴ – Չգիտեմ, բայց երեկ երեկոյան և այսօր ինչ-որ բան է տեղի ունենում... շա՛տ կարևոր բան... Ես գիտեմ, որ պետք է գնամ, ես պարտավոր եմ գնալ, սակայն...

ԿԻՆ – Սակա՞յն...

ՏՂԱՄԱՐԴ – Սակայն չեմ կարող...

ԿԻՆ – Մի իմաստուն առակ կա ավանակի մասին, որը ոչ մի կերպ չի կարողանում որոշել ա՞ջ կողմի խոտը ուտի, թե՞ ձախինը ու սովից սատկում է...

ՏՂԱՄԱՐԴ – Այդ ավանակը ե՞ս եմ:

ԿԻՆ – Չէ: Դու աջից էլ ես օգտվում, ձախից էլ...
Այնպես որ սովից հաստատ չես...

ՏՂԱՄԱՐԴ – «Սատկի», ուզում ես ասել... Դու իրավացի ես, ես հաստատ ուրիշ բանից կսատկեմ...
(Վերցնում է շիշը): Կարելի՞ է...

*Կինը թոթվում է ուսերը:
Տղամարդը խմում է:*

ՏՂԱՄԱՐԴ – Շատ լավ համ ունի... Ես նույնիսկ գիտեմ ինչից է:

ԿԻՆ – *(Տխուր ժպիտով)* Ընդհանրապես՝ խաղողից, բայց դու, իհարկե, կասես, որ խաղողը կապ չունի, այդ ես եմ... իմ աչքերը, իմ շրթունքները...

ՏՂԱՄԱՐԴ – Այո, քո աչքերը, քո շրթունքները...

ԿԻՆ – Իսկ առանց հուշելու... կարո՞ղ ես նույն բանն ասել:

ՏՂԱՄԱՐԴ – Կարող եմ, բայց ինձ դուր է գալիս, երբ դու հուշում ես...
Հոգնել եմ ինքնուրույն մտածել, խոսել... և ձեր քաղաք էլ եկա իմ կամքից դուրս:

ԿԻՆ – Ես այդ նկատեցի: *(Ցույց է տալիս հեռախոսը):*

ՏՂԱՄԱՐԴ – Դու նույնիսկ չգիտես, որքա՛ն իրավացի ես...

ԿԻՆ – Կանայք կատվի բնազդ ունեն, թեպետ այս դեպքում ամեն ինչ պարզից էլ պարզ է...

ՏՂԱՄԱՐԴ – Այո... Գրո՞ղը տանի, պետք է գնալ, իսկ ես փռվել եմ այս բազկաթոռին, կարծես...

ԿԻՆ – Տանը լինես...

ՏՂԱՄԱՐԴ – Կարծես տանը լինեմ...

ԿԻՆ – Ուզում ես մնա՞լ:

ՏՂԱՄԱՐԴ – Շա՛տ:

ԿԻՆ – Մնա, ես դեմ չեմ:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկապե՞ս:

ԿԻՆ – Իսկ ինչու ոչ, չէ՞ որ մենք արձակուրդ ենք վերցրել մեր անձնական կյանքից... Մոռացա՞ր...

ՏՂԱՄԱՐԴ – Երկու օրով... Չնայած մի օրն արդեն համարյա անցավ:

ԿԻՆ – Էլի քիչ չի:

ՏՂԱՄԱՐԴ – Դու իրավացի ես. 24 ժամ: *(Վերցնում է հեռախոսը):*

ԿԻՆ – Այդ ի՞նչ ես անում:

ՏՂԱՄԱՐԴ – Հաշվում եմ... 1440 թույլ... համարյա 100 հազար վայրկյան... Իսկական անվերջություն... Արի ամեն ինչ մոռանանք... 100 հազար վայրկյան ոչինչ չհիշենք:

ԿԻՆ – Չի՛ ստացվի:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ:

ԿԻՆ – Հեռախոսը: Դու մոռանում ես հեռախոսի մասին:

ՏՂԱՄԱՐԴ – Չեմ ուզում հիշել հեռախոսի մասին, չեմ ուզում հիշել, որ վաղը ես պարտավոր եմ գնալ... 100 հազար վայրկյան ես ուզում եմ ապրել:
Գիտե՞ս, ես նոր հասկացա, որ երկու օրն այնքան էլ քիչ ժամանակ չի երջանիկ լինելու համար:
Ես քեզ սիրում եմ:

ԿԻՆ – Միայն այդ էր պակաս: *(Ծիծաղում է):*

ՏՂԱՄԱՐԴ – Ճիշտ է, միայն այդ էր պակաս: Բայց մենք բացը կլրացնե՞նք: *(Փորձում է գրկել):*

ԿԻՆ – Գիտե՞ս, ինձ թվում է, որ միակ ճշմարիտ բանը, որ դու ինձ ասացիր այս ընթացքում՝ ուզբեկական փլավն էր:

ՏՂԱՄԱՐԴ – Ափսո՛ս...

ԿԻՆ – Ի՞նչը:

ՏՂԱՄԱՐԴ – Ափսոս, որ ես նկարիչ չեմ՝ ես կվարձեի քեզ որպես բնորդուհի և կհիանայի քո մարմնի յուրաքանչյուր ուլորքով: Օրինակ՝ սա ի՞նչ է... և ո՞ւր է տանում... *(Շոյուն է):*

ԿԻՆ – *(Ծիծաղում է)* Դրա համար քեզ ոչ թե նկարիչ է պետք լինել, այլ բժիշկ:

ՏՂԱՄԱՐԴ – Ինչո՞ւ բժիշկ:

ԿԻՆ – Դե, որքան ես հասկացա, քեզ հետաքրքրում է իմ կրօնավանդակի կառուցվածքը:

ՏՂԱՄԱՐԴ – Աստված իմ, դու ամեն ինչ գռեհկացնելու ընդունակություն ունես:

ԿԻՆ – Ների՛ր...

Տղամարդը շարունակում է զգուշորեն մերկացնել:

ԿԻՆ – Իմիջիայլոց, երեկ երեկոյան դու այս ամենն արդեն տեսել ես:

ՏՂԱՄԱՐԴ – Մի՛ խանգարի...

ԿԻՆ – Սպասիր, գոնե վարագույրը փակեմ:
(Վեր է կենում, գնում է դեպի վարագույրը):

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ եթե ես իսկապես նկարիչ լինեի, իսկ դու բնորդուհի, մենք դարձյա՞լ պիտի աշխատեինք մութ սենյակում:

ԿԻՆ – Բայց, ցավոք, կամ ավելի ճիշտ՝ բարեբախտաբար, դու նկարիչ չես և հետո...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ հետո:

ԿԻՆ – Ես ամաչում եմ...

ՏՂԱՄԱՐԴ – Այսինքն՝ ես դատապարտված եմ մինչև կյանքիս վերջը խլուրդի պե՞ս ապրել:

ԿԻՆ – Ինչո՞ւ մինչև կյանքիդ վերջը, ընդամենը մի օր:

ՏՂԱՄԱՐԴ – Դա մոտավորապես նույն բանն է:

ԿԻՆ – Մի չափազանցրու և... մի՛ շեղվիր:

ՏՂԱՄԱՐԴ – Չէ՛, ես չեմ ուզում խավարի մեջ...

*Տղամարդը բացում է վարագույրը:
Կինը վեր է կենում և ձվածեղի ափսեմ տանում է խոհանոց:*

ՏՂԱՄԱՐԴ – Ներիր... Ինձ մի պահ թվաց, որ ամեն ինչ վերջացավ և երբեք չի լուսանա... Երևի հիմարությունն են ասում...

ԿԻՆ – *(Վերադառնալով սենյակ)* Չգիտեմ...

ՏՂԱՄԱՐԴ – Ես իսկապես չհասկացա ի՞նչ պատահեց:

ԿԻՆ – Մեղավորը ես էի... Ես խախտեցի խաղի օրենքները:

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ օրենքներ:

ԿԻՆ – Մեր չարաբասիկ խաղի. սկզբում մենք միլիոնատեր ու Մոխրոտիկ էինք խաղում, հետո՝ զոհ ու մարդասպան... Իսկ հիմա՝ նկարիչ ու բնորդուհի...
Երևի ես վատ խաղընկեր եմ... Ավելի ճիշտ, ես գերազնահատեցի իմ համեստ հնարավորությունները՝ ես...
հոգնեցի:

Չնչում է հեռախոսազանգ:

ԿԻՆ – Ի՞նչ մեղք ես...
Ես քեզ խղճում եմ... Չէ, չեմ մեղադրում... պարզապես խղճում եմ:
Դուք՝ տղամարդիկ, շատ միամիտ եք:

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ կանա՞յք:

ԿԻՆ – Կանայք գիշատիչներ են: Նրանք իրենց որսը բաց չեն թողնի, կհոշոտեն, բայց բաց չեն թողնի: Դա բնազդ է, և դրա հետ ոչինչ անել չես կարող...

ՏՂԱՄԱՐԴ – Դու ո՞ւմ նկատի ունես:

ԿԻՆ – Բուլդոզի... Կնոջդ, որից հեռացել ես, և որը սպանում է այս զանգերով, ինձ, որ բացարձակապես ոչ մի իրավունք չունեմ քո նկատմամբ... Պատկերացնո՞ւմ ես, նույնիսկ ես ինչ-որ պահանջներ եմ ներկայացնում...

ՏՂԱՄԱՐԴ – Երեկ, երբ ես քեզ տեսա սրճարանում, ինձ թվաց, որ դու հուզված ես:

ԿԻՆ – Ես պետք է հանդիպեի ընկերուհուս հետ:

ՏՂԱՄԱՐԴ – Չանդիպեցի՞ր:

ԿԻՆ – Ոչ: Նա զանգահարեց և ասաց, որ չի կարող գալ...
Փոխարենը՝ հայտնվեցիր դու...

ՏՂԱՄԱՐԴ – Իսկ ընկերուհիդ չասա՞ց, ինչու չի կարող գալ:

ԿԻՆ – Չգիտեմ, ինչ-որ գործեր կային...

ՏՂԱՄԱՐԴ – Իմիջիայլոց, քո ընկերուհին իմ կինն է... նախկին...

ԿԻՆ – Ինչպե՞ս... Ուրեմն այս զանգերը... և դու ինձ ոչինչ չասացի՞ր...

ՏՂԱՄԱՐԴ – Ես ինքս էլ քիչ առաջ իմացա դրա մասին: Նա ճանաչեց քո ձայնը, երբ դուք խոսում էիք հեռախոսով...

ԿԻՆ – Սրիկա՛...

ՏՂԱՄԱՐԴ – Ես իսկապես ոչինչ չգիտեի:

ԿԻՆ – Ստո՛ւմ ես, դու ամեն ինչ գիտեիր... Երկու օ՛ր... 100 հազար վայրկյան... անվերջություն... Իսկ ես հիմարի պես լսում էի...
Տղամարդը պատրաստվում է հեռանալ:

ԿԻՆ – *(Հանկարծ ինչ-որ բան հիշելով)* Սպասի՛ր... Ես գիտեմ, որ նրա ամուսնուն... նախկին ամուսնուն պետք է վիրահատեն:

ՏՂԱՄԱՐԴ – Այո, այսօր, իմիջիայլոց՝ ձեր հիվանդանոցում:
Այնպես որ «Կակտուս»-ի մասին հեքիաթները կարող ես ուրիշներին պատմել, չնայած պետք չի՝ ուրիշները կարող են լուրջ ընդունել:

ԿԻՆ – Ոչինչ չեմ հասկանում... Ուրեմն դու...

ՏՂԱՄԱՐԴ – Ի՞նչ ես...

ԿԻՆ – Ինչպե՞ս թե՛ ինչ ... Քեզ պետք է վիրահատեն, իսկ փոխարենը մենք այստեղ...

ՏՂԱՄԱՐԴ – Ուզում ես ասել՝ սիրում էինք իրար...
Կարծում եմ, վատ տարբերակ չէր:

ԿԻՆ – Դեռ կատակո՞ւմ ես: Գիտե՞ս, քեզ ինչ է սպառնում:

ՏՂԱՄԱՐԴ – Գիտեմ...

ԿԻՆ – Ոչ, դու ոչինչ էլ չգիտես... Քեզ ընդամենը երկու օր էր մնացել և եթե չհասցնեն վիրահատել...

ՏՂԱՄԱՐԴ – Մենք մեր սիրավեպը հնարավորություն չենք ունենա շարունակելու:

ԿԻՆ – Վե՛րջ տուր...

ՏՂԱՄԱՐԴ – Չեմ հասկանում, ձեզ մոտ բոլո՞ր բժիշկներն են այդպես բղավում հիվանդների վրա:

ԿԻՆ – Ինչպե՞ս չես հասկանում:

ՏՂԱՄԱՐԴ – Հանգստացիր, ինձ խոստացել են...

ԿԻՆ – Ես գիտեմ, բայց եթե վիրահատությունը ժամանակին կատարվեր: Իսկ հիմա...

ՏՂԱՄԱՐԴ – *(Դադարից հետո)* Կարծում ես՝ ո՞ւշ է:

ԿԻՆ – Չգիտեմ... Ամեն ինչում ե՛ս եմ մեղավոր:

ՏՂԱՄԱՐԴ – Դու ոչնչում մեղավոր չես:

ԿԻՆ – Հասկանո՞ւմ ես, որ այդ երկու օրերը համարյա անցան:

ՏՂԱՄԱՐԴ – Ոչ թե անցան, այլ ես վայելեցի այդ սքանչելի օրերը:

ԿԻՆ – Աստված իմ, այս ի՞նչ արեցինք... Դու գիտե՞իր, որ քեզ չէր կարելի խմել... ոչ մի կաթիլ...

ՏՂԱՄԱՐԴ – Գիտեի...

ԿԻՆ – Ինչպե՞ս... ինչպե՞ս թե գիտեիր...

ՏՂԱՄԱՐԴ – Այո, գիտեի: Բայց ես չէի կարող զսպել ինձ:

ԿԻՆ – Ինչո՞ւ:

ՏՂԱՄԱՐԴ – Ես ասացի՝ գինին շատ համեղ էր... Քո շուրթերի համն ուներ: *(Փորձում է համբուրել)*: Լավ ասացի, չէ՞ ...

ԿԻՆ – *(Այլայլված)* Սպասի՛ր, ես հիմա... Մենք դեռ կհասցնենք... Հաստատ կհասցնենք:

Վազում է հագնվելու:

ԿԻՆ – *(Լսվում է միայն ձայնը)* Ամեն ինչ լավ կլինի...

Կտեսնե՛ս, քեզ կվիրահատեն ...

Դեռ ո՛ւշ չի...

Հետո ես քեզ համար փլավ կպատրաստեմ, իսկական ուզբեկական փլավ:

Չգիտեմ այն ոնց են պատրաստում, բայց ես կսովորեմ...

Վերցնում ես բրինձը, գազարը...

*Այդ ընթացքում Տղամարդը գինի է լցնում բաժակի մեջ և խմում է:
Մթնում է:*

Վ Ե Ր Ջ